ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 *ՀՈԿՏԵՄԲԵՐԻ* 2020 թվականի N 30

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով պահանջով, ավագանին որոշում է.
Հաստատել նիստի օրակարգը՝ հետևյալ հաջորդականությամբ,

1.ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ԶԵԿ. Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ/
2. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
3.ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ/
4. «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՇՎԻՆ 1 000 000 /ՄԵԿ ՄԻԼԻՈՆ/ ՀՀ ԴՐԱՄ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 23-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ /
6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 33, 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի ԹԻՎ 13 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 22 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

7. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՁՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 12 ՀԱ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ - 0

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ

ՎԱՐԴԳԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 *ՀՈԿՏԵՄԲԵՐԻ* 2020 թվականի N 31-Ն

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2020 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը /համաձայն հավելվածի/:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ

ՎԱՐԴԳԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՈՍՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Հավելված1

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ հազ. դրամ 9/30/2020

ՀՀ	Եկամտատեսակները	Պլանը	Փաստացի	կատ,%
	Ընդամենը եկամուտներ, այդ թվում	149341.860	111251.90	74.49
	1.Հարկեր և տուրքեր, այդ թվում	20260.00	9503.71	46.91
1/1	Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում	6800.00	2743.06	40.34
	Գույքահարկ շենքի և շինությունների, որից	200.00	119.58	59.79
	Հողի հարկ, այդ թվում	6600.00	2623.48	39.75
	Ֆիզիկական անձանիցից	6450.00	2444.44	37.90
	Իրավաբանական անձանցիծ	150.00	179.04	119.36
1/2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	13000.00	6237.35	47.98
1/3	Տեղական տուրքեր, որից	460.00	523.30	113.76
	Շինությունների շինարարության թույլատվության համար, որից	100.00	115.10	115.10
	Ծխախոտին Խմիչքներիվաճառքի թույլտվություն	300.00	348.20	116.07
	վառելիքի վաճառքի համար	60.00	60.00	100.00
	2.Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում	102401.20	78968.30	77.12
2/5	Ընթացիկ ներքին դրամաշնորհներ/դոտացիա/	102401.20	76739.40	74.94
	Նպատակային հատկացումներ/սուբվենցիա/ Այլ դոտացիա	0.00	2228.90	
	3.Այլ եկամուտներ	13500.00	10599.23	78.51
3/3	Գույքի վարձակալությունից մուտքեր, որից	9000.00	6152.15	68.36
	Հողերի վարձակալություն	9000.00	6152.15	68.36
	Այլ գույքի Վարձակալություն			
3/5	Վարչական գանձումներ, այդ թվում	4500.00	4447.08	98.82
	Տեղական վճարներ	1100.00	348.04	31.64
	Այլ ոչ հարկային եկամուտներ	3400.00	4099.04	120.56
	4. Հողի օտարումից մուտքեր	1000.0	0.00	0.00
	5,Մնացորդը	12180.66	12180.66	
5/1	Վ/Բ	8331.73	8331.73	
5/2	Ֆ/Բ	3848.93	3848.93	

Համայնքի ղեկավար՝ Ռ.Անդրեասյան

Հաշվապահ՝ Ա.Մելքոնյան

30/09/20թ

Հավելված2

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Ն			ԾԱԽՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2020_թ-ի տարեկան բյուջեն	2020- թ-ի հաշվետու ժամանակաշրջան (Եռամսյակ ,I կիսամյակ , 9 ամիս , տարին)			
				պլան	պլան	փաստացի	կատարման %	կատարման %տարեկան պլանի նկատմամբ
Բաժին	խումբ	դաս	Ընդամենը	149341.86		68583.30		45.92
1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	67740.66		43596.78		64.36
1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	500.00		210.00		42.00
4	1	2	Աշխատանքի հետ կապված ընդհանուր բնույթի հարաբերություններ	1910.00		280.00		14.66
4	2	4	Ոռոգում	1650.00		1647.04		99.82
4	5	1	ճանապարհային տրանսպորտ	1980.00		989.92		50.00
4	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	990.00		919.37		92.87
5	1	1	Աղբահանում	1110.00		775.00		69.82
6	4	1	Փողոցների լուսավորում	1950.00		1214.00		62.26
6	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ	1400.00		442.70		31.62
8	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	800.00		98.80		12.35
8	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	29000.00		12682.69		43.73
8	5	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	1800.00		0.00		0.00
9	1	1	Նախադպրոցական կրթություն	25400.00		4307.00		16.96
10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	5000.00		1420.00		28.40
11	1	2	ՀՀ համայնքների սահմանադրական ֆոնդ	8111.20				0.00

Համայնքի ղեկավար՝ Ռ.Անդրեասյան

Հաշվապահ՝ Ա.Մելքոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590, (0234)86-486, urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 32-Ն

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ կետով,ավագանին որոշեց.

Բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝
Վ/Բ պահուստային ֆոնդից հատկացնել՝
1. 2000,0 հազար դրամ՝
ըստ գործառնական դասակարգման 10-7-1<<Սոցիալական հատուկ արտոնություններ>> ծրագրին՝ ծախսերը սահմանելով 7000,0 հազար դրամ:
Այդ թվում՝
4726 հոդվածն ավելացնել 1000,0 հազար դրամով սահմանելով 2500,0 հազար դրամ:
4729 հոդվածը ավելացնել 1000,0 հազար դրամով սահմանելով 4500,0 հազար դրամ:
2. 1500,0 հազար դրամ՝
ըստ գործառնական դասակարգման 1-1-1<<Օրենսդիր և գործադիր մարմիններ >> ծրագրին՝ ծախսերը սահմանելով 69240,65 հազար դրամ:
Այդ թվում՝
4819 հոդվածը ավելացնել 1000,0 հազար դրամով սահմանելով 2400,0 հազար դրամ:
4267 հոդվածը ավելացնել 500,0 հազար դրամով սահմանելով 1000,0 հազար դրամ:
ըստ գործառնական դասակարգման 11-1-2<< Պահուստային Ֆոնդ>> ծախսերը սահմանել 4611,2 հազար դրամ :
Այդ թվում՝
4891 հոդվածը կրճատել 3500,0 հազար դրամով սահմանելով 4611,2 հազար դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ
ՎԱՐԴԳԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020 թվականի N 33

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՇՎԻՆ 1000000 /ՄԵԿ ՄԻԼԻՈՆ/ ՀՀ ԴՐԱՄ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ մասով, հիմք ընդունելով Արցախում ստեղծված պատերազմական իրավիճակը ,ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաշվին է փոխանցել 1 000 000 / մեկ միլիոն/ ՀՀ դրամ՝ ի մասնակցություն <<Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար>> մարդասիրական և զարգացման ծրագրի:

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԳԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 *ՀՈԿՏԵՄԲԵՐ* 2020 թվականի N 34-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՒՐՑԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 23-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ուրցաձոր համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման նոր կարգը՝ համաձայն հավելվածի:
2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 23-ա որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԳԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքի ավագանու
2020 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 34-Ա որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ուրցաձոր համայնքի ղեկավարին (այսուհետև՝ համայնքի ղեկավար) վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համայնքի ղեկավարը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով թվարկված և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով վերապահված կամավոր լիազորություններ: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները՝

1. Պաշտպանության կազմակերպման բնագավառում՝

1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև՝ զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների, զոհվածների, վիրավորների սոցիալական խնդիրների լուծմանը.

3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝

1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.

2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.

3) կազմում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.

4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.

5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

3. Հողօգտագործման բնագավառում՝

1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.

2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

4. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող

աշխատանքների բնագավառում՝

1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.

3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.

4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.

5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

5. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝

1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.

2) աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.

3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

6. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում՝

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.

2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

7. Գյուղատնտեսության բնագավառում՝

1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.

2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ՝

1. Յուրաքանչյուր տարի կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարին կարող է նախատեսվել հատկացնել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:

2. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար պահանջվում է ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների դեպքերում:

3. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

4. Կամավոր լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները,

հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

5. Այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

6. Այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, նախաձեռնողը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը, անհրաժեշտության հիմնավորումը և դրա պատճառը, անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

7. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 8-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր լիազորության իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր լիազորության իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

8. Եթե կամավոր լիազորության իրականացման նախաձեռնողը սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը ներկայացնում է վերջինիս քննարկմանը:

9. Համայնքի ավագանին սույն կարգի 8-րդ կամ 10-րդ կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր լիազորության իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր լիազորության իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

10. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր լիազորության իրականացման լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր լիազորության իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

11. Համայնքի ղեկավարը զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման , հաշմանդամների, կերակրողին կորցրած

ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամները, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետները, ինչպես նաև համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

12. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված այլ կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

13. Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները ավագանու կողմից քննարկվում են միայն մշտական գործող հանձնաժողովի կողմից կամավոր լիազորության իրականացման եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

14. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 100/մեկ հարյուր հազար/ դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարի մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա):

15. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան 2 անգամ՝ տարեկան ուսման վարձի 50%-ի չափով: Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

16. Պատերազմական ժամանակաշրջանում զոհված ազատամարտիկների ընտանիքներին, վիրավոր և կամավորական սկզբունքով պատերազմի մասնակցած քաղաքացիների ընտանիքներին հատկացնել մինչև 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

17. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չնախատեսված կարգով կամավոր լիազորությունների իրականացումն արգելվում է:

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 *ՀՈԿՏԵՄԲԵՐԻ* 2020 թվականի N 35

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 33, 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի ԹԻՎ 13 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 22 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1408-Ն որոշումը, ավագանին որոշեց.

1/ Թույլատրել՝
1. Համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 0.18843 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-095-0304-0108/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ:
2. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 1.407 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-095-0304-0107/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 285000 /երկու հարյուր ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ:
3. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Լանջանիստ բնակավայրում 0.1962 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-046-0105-0060/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 110000 /մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:
4. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Լանջանիստ բնակավայրում 1.02642 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր

հողամասը /կադաստրային ծածկագիր 03-046-0105-0101/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
5.համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Լանջանիստ բնակավայրում 0.2900 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-046-0105-0100/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:
6. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 13.07947 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-095-0329-0033/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով, որի մեկնարկային գինը սահմանել 2,700000 /երկու միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
7. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Շաղափ բնակավայրում 0,2 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-075-0132- 0007/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:
8. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 0,5 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-095-0371-0009/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
9.համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Լանջանիստ բնակավայրում 0,32577 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-046-0105-0110/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 170000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:
10. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 0,5 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-095-0305-0052/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
11. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում Թումանյան 115 փողոցում գտնվող 0,08 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը /կադաստրային ծածկագիր 03-095-0012-0013/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 103000 /մեկ հարյուր երեք հազար/ ՀՀ դրամ:
12. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Շաղափ բնակավայրում 3 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը /կադաստրային ծածկագիր 03-075-0107-0009/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով, որի մեկնարկային գինը սահմանել 600000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ:

13. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 0.04 հա գյուղատնտեսական նշանակության այլ կադաստրային ծածկագիր 03-095-0334-0088 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով, որի մեկնարկային գինը սահմանել 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:
14.համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում,4-րդ փողոց 2/6 հասցեում գտնվող 0.04817 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական գյուղատնտեսական արտադրական օբյեկտը կադաստրային ծածկագիր /03-095-0333- 0078 /առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
15. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 0.64741 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը կադաստրային ծածկագիր /03-095-0351-0013/ առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով, որի մեկնարկային գինը սահմանել 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
16.համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 0.107 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը կադաստրային ծածկագիր 03-095-0320-0041 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 50000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ:
17.համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 0.30559 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը կադաստրային ծածկագիր 03-095-0306-0016 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 200000 / երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
18. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Շաղափ բնակավայրում 0.5 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը կադաստրային ծածկագիր 03-075-0124-0089 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 250000 / երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
19. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Շաղափ բնակավայրում 1.25 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը կադաստրային ծածկագիր 03-075-0125-0100 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով, որի մեկնարկային գինը սահմանել 300000 / երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
20. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Շաղափ բնակավայրում 0.049 հա գյուղատնտեսական նշանակության այլ կադաստրային ծածկագիր 03-075-0022-0016 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 20000 / քսան հազար/ ՀՀ դրամ:
21. համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Շաղափ բնակավայրում 2 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը կադաստրային ծածկագիր 03-075-0125-0094 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
22.համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Լանջանիստ բնակավայրում 0.0431 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր կադաստրային ծածկագիր 03-046-0112-0007 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1

/մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 30000 / երեսուն հազար/ ՀՀ դրամ:
23.համայնքային սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում, Իսահակյան փողոց թիվ 9 հասցեում գտնվող 0,206 հա գյուղատնտեսական նշանակության այլ կադաստրային ծածկագիր 03-095-0334-0085 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 50000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ:
24.պետական սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 2,0466 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը կադաստրային ծածկագիր 03-095-0371-0007 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 1000000 / մեկ միլիոն/ ՀՀ դրամ:
25.պետական սեփականություն հանդիսացող Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր բնակավայրում 2,7974 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող կադաստրային ծածկագիր 03-095-0370-0003 առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում աճուրդ վաճառքի կարգով օտարելու նպատակով,որի մեկնարկային գինը սահմանել 1500000 / մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի / ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՄԱՍԸ, 0,5 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՄԱՍԸ, 0,049 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ, 1,25 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ ԹԻՎ 33, 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի / ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ / ԹԻՎ 13 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի / ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ / ԹԻՎ 22 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 *ՀՈԿՏԵՄԲԵՐ* 2020 թվականի N 36

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 12 ՀԱ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ, ավագանին որոշեց.

1.Տալ համաձայնություն Ուրցաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստ հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 12 հա հատուկ պահպանվող տարածքը անհատույց տրամադրելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ